# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

**գ. Լոռի Բերդ** **« 17 » օգոստոսի 2026թ.**

## Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն  ԹԻՎ 9

## ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Կայացավ ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու 2026թ. օգոստոսի 17-ին, ժամը՝ 11:00-ին հրավիրված արտահերթ նիստը:

Նիստը ուղիղ հեռարձակվում է համայնքապետարանի ֆեյսբուքյան էջով, քանի որ համայնքապետարանի յութուբյան ալիքի հետ առաջացել է տեխնիկական խնդիր:

Նիստին ներկա էին Լոռի Բերդ համայնքի ավագանու տասնչորս անդամները, հարգելի պատճառով բացակա էր՝ Լոռի Բերդ համայնքի ղեկավար Արայիկ Ներսիսյանը

**<u>Նիստը վարեց՝ Լոռի Բերդ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Վահրամ Պապիկյանը:</u>**

**<u>Նիստը արձանագրեց՝ Լոռի Բերդի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Անի Մարտիրոսյանը:</u>**

Համայնքի ղեկավար Արայիկ Ներսիսյանը ներկայացրեց նիստի օրակարգը, որտեղ տեղ էին գտել հետևյալ հարցերը.

**<u>Լսեցին՝</u>**

### ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**<u>Զեկ./Արայիկ Ներսիսյան/</u>**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 65-րդ հոդվածով՝

**<u>Ավագանին որոշեց՝</u>** հաստատել ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու 2026 թվականի օգոստոսի 17-ի արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն ստորև ներկայացված տեսքի.

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳ

1) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու 2026 թվականի օգոստոսի 17-ի արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:

2) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով 2027 թվականի բյուջետային ֆինանսավորման ծրագրերին մասնակցելու և ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի 2027 թվականի սուբվենցիոն ծրագիրը հաստատելու մասին:

3) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը մրցութային կարգով 25 տարի ժամկետով վարձակալության տրամադրելու մասին:

4) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը էլեկտրոնային աճուրդով օտարելու թույլտվություն տալու և մեկնարկային գներ սահմանելու մասին:

**<u>14 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:</u>**

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 44-Ա/

**<u>Լսեցին՝</u>**

### ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ՝ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ 2027 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԵՎ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2027 ԹՎԱԿԱՆԻ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**<u>Զեկ./Էդուարդ Մելիքսեթյան/</u>**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, հիմք ընդունելով Լոռի Բերդ համայնքում 2026 թվականի հուլիսի 28-ին կայացած հանրային լսումների արդյունքները, ինչպես նաև հաշվի առնելով Լոռի Բերդ համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

**<u>Ավագանին որոշեց՝</u>** տալ հավանություն ՀՀ պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով 2027 թվականի բյուջետային ֆինանսավորման ծրագրերին Լոռի Բերդ համայնքի մասնակցության առաջարկությանը: Հաստատել՝ Լոռի Բերդ համայնքի 2027 թվականի սուբվենցիոն ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

**<u>14 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:</u>**

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 45-Ա

Հավելվածը կցվում է:

**Լսեցին՝**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ 25 ՏԱՐԻ ԺԱՄԿԵՏՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

*Զեկ./Անի Մարտիրոսյան/*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ, 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 42-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 59-րդ և 67-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 28.09.2023թ. N 1667-Ն որոշմամբ հաստատված կարգով, Լոռի Բերդ համայնքի գլխավոր հատակագծով, հիմք ընդունելով թիվ ԼՄԼԲՀ-ԳՀԾՁԲ-25/02 պայմանագրի շրջանակներում՝ «ՄԱՏՐԻՑԱ-ԻՆՏ» ՍՊԸ-ի կողմից իրականացրած՝ Լոռի Բերդ համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի գնահատման հաշվետվությունները, ինչպես նաև Լոռի Բերդ համայնքի ավագանու իրավական, քաղաքաշինության, հողօգտագործման և գյուղատնտեսության հարցերի մշտական հանձնաժողովի 2026 թվականի օգոստոսի 11-ի թիվ 5 արձանագրությունը (դրական եզրակացություն) և դրան կից հավելված 1-ով հաստատված արդյունքները՝

**Ավագանին որոշեց՝** տալ հավանություն համայնքային սեփականություն հանդիսացող ներքոհիշյալ հողամասերը մրցութային կարգով 25 տարի ժամկետով վարձակալության տրամադրելուն Լոռի Բերդ համայնքի բյուջեի նկատմամբ պարտքեր չունեցող ֆիզիկական և իրավաբանական անձանց.

**1)** Լոռի Բերդ համայնքի Լոռի Բերդ բնակավայրում գտնվող 06-044-0214-0003 կադաստրային ծածկագրով, 0.32024 հա մակերեսով, գյուղատնտեսական նպատակային նշանակության, խոտհարք գործառնական նշանակության, հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը՝ 7 000 (յոթ հազար) ՀՀ դրամ:

**2)** Լոռի Բերդ համայնքի Բովաձոր բնակավայրում գտնվող 06-025-0101-0084 կադաստրային ծածկագրով, 1.2821 հա մակերեսով, գյուղատնտեսական նպատակային նշանակության, արոտավայր գործառնական նշանակության, հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը՝ 26 000 (քսանվեց հազար) ՀՀ դրամ:
Չափագրման, վկայականների ձեռքբերման և նոտարական վավերացման ծախսերը փոխհատուցվելու են վարձակալության մրցույթում հաղթող ճանաչված անձի կողմից:

**14 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:**

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 46-Ա/

**Լսեցին՝**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

*Զեկ./Անի Մարտիրոսյան/*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ, 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 42-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 59-րդ և 67-րդ հոդվածներով, ինչպես նաև հիմք ընդունելով թիվ ԼՄԼԲՀ-ԳՀԾՁԲ-25/02 պայմանագրի շրջանակներում Լոռի Բերդ համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի գնահատման արդյունքները, Լոռի Բերդ համայնքի ավագանու իրավական, քաղաքաշինության, հողօգտագործման և գյուղատնտեսության հարցերի մշտական հանձնաժողովի 2026 թվականի օգոստոսի 11-ի թիվ 5 արձանագրությունը (դրական եզրակացություն) և դրան կից հավելված 1-ով հաստատված արդյունքները՝

**Ավագանին որոշեց՝** տալ հավանություն՝ համայնքային սեփականություն հանդիսացող ստորև նշված հողամասերը էլեկտրոնային աճուրդով օտարելուն՝ Լոռի Բերդ համայնքի բյուջեի նկատմամբ պարտավորություններ չունեցող ֆիզիկական և իրավաբանական անձանց.

1. Լոռի Բերդ համայնքի Ագարակ բնակավայրում գտնվող՝ 06-009-0025-0026 կադաստրային ծածկագրով, 0.05427 հա մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամաս՝ 1 140 000 (մեկ միլիոն մեկ հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ մեկնարկային գնով:
2. Լոռի Բերդ համայնքի Ագարակ բնակավայրում գտնվող՝ 06-009-0025-0027 կադաստրային ծածկագրով, 0.03241 հա մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամաս՝ 690 000 (վեց հարյուր իննսուն հազար) ՀՀ դրամ մեկնարկային գնով:
3. Լոռի Բերդ համայնքի Ագարակ բնակավայրում գտնվող՝ 06-009-0025-0028 կադաստրային ծածկագրով, 0.01613 հա մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամաս՝ 330 000 (երեք հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամ մեկնարկային գնով:
4. Լոռի Բերդ համայնքի Սվերդլով բնակավայրում գտնվող՝ 06-101-0009-0001 կադաստրային ծածկագրով, 0.17041 հա մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամաս՝ 1 940 000 (մեկ միլիոն ինը հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ մեկնարկային գնով:

Չափագրման, վկայականների ձեռքբերման, միասնական տեղեկանքի ստացման, գնահատման, նոտարական վավերացման և պետական գրանցման հետ կապված ծախսերը կրում է աճուրդում հաղթող ճանաչված անձը:

**14 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:**

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 47-Ա/

***Նիստի փակում*:**

Ավագանու անդամներ՝

Խալաթյան Ավետիք Հարությունի

Շահնազարյան Թամարա Էդիկի

Պապյան Հարություն Միշիկի

Պապիկյան Վահրամ Ռոմիկի

Չիբուխչյան Արման Հրաչիկի

Ներսեսյան Իրինա Վազգենի

Սիմոնյան Անահիտ Բաբկենի

Մարգարյան Սիլվա Ստեփանի

Վերմիշյան Կարեն Ջիվանի

Գրիգորյան Աննա Հրայրի

Զատինյան Վանո Վալերի

Սերոբյան Անի Սամվելի

Ասրյան Աննա Տիգրանի

Գևորգյան Միշիկ Մարտիկի

Լոռի Բերդ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝

Վահրամ Պապիկյան ______________

*Նիստը արձանագրեց*՝ Անի Մարտիրոսյանը ______________

Կ.Տ.